



Մամուլի հաղորդագրություն

Մայիսի 8, 2020թ., Երևան

Մարդասիրական բացառիկ օգնություն ՔՈԱՖ-ի շահառուներին Լոռու մարզում

Եվրոպական միության ֆինանսավորմամբ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) **մարդասիրական բացառիկ օգնություն** է ցուցաբերում Լոռու մարզի 1000 ընտանիքի:

Եվրոպական միությունն աջակցում է կորոնավիրուսային համավարակի ճգնաժամի հետևանքով տուժած կարիքավոր ընտանիքներին: Լոռու մարզին տրամադրվող ֆինանսական աջակցության չափը 60,000 եվրո է: Եվրոպական միության այս ծրագիրն իրագործվելու է նաև Շիրակի և Տավուշի մարզերում՝ տեղական և մարզային իշխանությունների հետ սերտորեն համագործակցությամբ:

«Տնտեսական հետևանքով յուրաքանչյուր ճգնաժամ, ինչպիսին նաև սա է, բացասաբար է ազդում բնակչության խոցելի խմբերի վրա: Մեր բարոյական պարտքն է օգնել կարիքի մեջ գտնվողներին և ուղղորդել վարակի տարածման սահմանափակման գործընթացում: Այս դժվարին ժամանակներում ԵՄ-ն օգնության ձեռք է մեկնում Հայաստանի մարզերին՝ ճգնաժամային իրավիճակը միասին հաղթահարելու համար», - նշում է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան **Անդրեա Վիկտորինը**:

ՔՈԱՖ-ի շահառու 26 գյուղական և 2 քաղաքային (Վանաձոր և Ալավերդի) համայնքների սոցիալապես խոցելի նշված ընտանիքներն աջակցություն են ստանալու 2 անգամ՝ ապրիլի վերջին ու մայիսին: Յուրաքանչյուր ընտանիքին տրամադրվող փաթեթը ներառում է առաջնային անհրաժեշտության պարենային մթերք, հիգիենայի պարագաներ ու գրենական պիտույքներ:

Սոցիալապես խոցելի ընտանիքների ընտրությունը հիմնված է ՔՈԱՖ-ի սոցիալական աշխատողների՝ տարիների սրտացավ աշխատանքի, լրջորեն կատարված հետազոտությունների, կարիքների գնահատումների ու պարբերական մոնիտորինգների արդյունքների վրա:

«ՔՈԱՖ-ը ԵՄ-ի համար վստահելի գործընկեր է, որն ունակ էր այս ծրագիրն իրագործել արագ, ինչն այս իրավիճակում շատ կարևոր է, և արդյունավետ, այսինքն՝ հասցեական, քանի որ տարիներ շարունակ մեր մասնագետներն աշխատում են գյուղում գյուղաբնակների հետ»,- բացատրում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատուրյանը**:

Աջակցություն են ստանալու նաև ՔՈԱՖ-ի շահառու 26 գյուղական համայնքների բուժհաստատությունները: Յուրաքանչյուր բուժհաստատության փաթեթ կպարունակի բժշկական առաջնային անհրաժեշտության պարագաներ:

* * *

Եվրոպական միության մասին

Եվրոպական միության անդամ երկրները որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները:

50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրոպական միությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին՝ ծառայելու մարզի շուրջ 150 հազար բնակիչներին: